

IDBank

2023

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

01 Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

02 Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 10

Վարչության նախագահի ուղերձ 11

ՀՀ տնտեսությունը 12

Մեր ռազմավարական արդյունքները 15

Ֆինանսական արդյունքներ 19

Մեր անձնակազմը 22

03 Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 26

Ռիսկերի կառավարում 28

04 Ֆինանսական հաշվետվություններ 31

05 Պատասխանատու անձանց հայտարարություն 35

1

Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

IDBank-ը Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 34-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում:

1990 — 01
Բանկի հիմնադրում

2007 — 02
Moody's ընկերության կողմից առաջին անգամ միջազգային վարկանիշի ստացում

2018 — 03
"«Անելիք Բանկ» ՓԲԸ-ի վերանվանում **«ԱյԴի Բանկ»** ՓԲԸ-ի

2019 — 04
Idram - IDBank համատեղ թվային հարթակի գործարկում

2020 — 05
Rocket line հեղափոխական ապառիկի գործարկում

2022 — 06
1.000.000-ից ավել Rocket line թվային ապառիկի գործարք

2022 — 07
FISTOCO LTD-ն դարձել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր

2023 — 08
Հայաստանում բոլոր անկանխիկ վճարումների ավելին քան 30%-ի ապահովում՝ քանակով և ծավալով

2023 — 08
ID Group-ը դարձել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի 100% բաժնետեր

IDBank-ը մեկ հայացքով

2023 թվականի արդյունքներով

- **Հայաստանի ամենաշահութաբեր բանկերի թոփ 5-յակում**
- **BNPL լուծումների առաջատար**
- **Տրանզակցիաների գծով առաջատար**

Ակտիվներ	**367 մլրդ**
Պարտավորություններ	**303 մլրդ**
Ավանդներ, Հաշիվներ	**210 մլրդ**
Կապիտալ	**63,5 մլրդ**
Զուտ շահույթ	**15,8 մլրդ**
ROE	**25.8 %**
CIR	**38.5 %**

Հայաստանում անկանխիկ վճարումների ավելին քան 30%-ի ապահովում

- Visa միջազգային համակարգի ամենամեծ թվով թողարկված քարտեր
- Քարտերով վճարումների մոտ **140%** աճ
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների **32%** աճ

Կորպորատիվ բանկային հաճախորդներ	**21 հազ.**
Մանրածախ բանկային հաճախորդներ	**562 հազ.**
Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ	**83.0%**
Քարտեր	**407 հազ.**
“Գնիր հիմա, վճարիր հետո” 0%-ով POS տերմինալներ	**7500+**
Աշխատակիցներ	**914**

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

Բանկի առաքելությունը

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

Բանկի տեսլականը

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

Բանկի արժեքները

> **Հաճախորդակենտրոն մոտեցում.** Մեր հաճախորդները կենտրոնում են այն ամենի, ինչ մենք ստեղծում և իրագործում ենք: Մենք առաջնահերթություն ենք տալիս նրանց կարիքներին՝ մատուցելով անհատականացված ծառայություններ և ձգտելով գերազանցել սպասելիքները:

> **Նորարարություն.** Մեր ԴՆԹ-ում է, որպես դինամիկ և փոխկապակցված ցանց, միավորել ֆինանսը, տեխնոլոգիան և նորարարությունը՝ հարստացնելու մեր հաճախորդների կյանքը՝ տրամադրելով գործիքներ և ծառայություններ, որոնք թույլ են տալիս ֆինանսական ազատություն և աճ:

> **Թափանցիկություն.** Մենք բիզնես վարում ենք ազնիվ, թափանցիկ և անսասան էթիկական չափանիշներով:

> **Սոցիալական պատասխանատվություն.** Սոցիալական պատասխանատվությունը մեր հիմնական արժեքների անկյունաքարն է, որն արտացոլում է համայնքի և ընդհանուր առմամբ մեր ժողովրդի վրա դրական ազդեցություն ունենալու մեր անսասան հանձնառությունը:

Մեր ձեռքբերումները

- ✓ **Ba3** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **B1** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ

IDBank- ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ)

ESG-ի փոխակերպում և ռազմավարության իրականացում՝ համաձայն Կապիտալի շուկայի միջազգային ասոցիացիայի (ICMA) սկզբունքների

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը **(BAFT)**՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում

BSI-ի կողմից Բանկին շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման միջազգային համապատասխանության վկայագիր **ISO/IEC 27001:2013**

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX- ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond և Bbond ցուցակներում

IDBank-ը՝ **VISA** քարտերի խոշոր թողարկողներից Հայաստանում

Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2023 թվականի ընթացքում բանկը հաջողությամբ իրականացրել է 3 պարտատոմսերի թողարկում:

2023 թվական	հուլիս	օգոստոս	նոյեմբեր
Թողարկման ընդհանուր ծավալը	**5 մլն** ԱՄՆ դոլար	**3 մլն** ԱՄՆ դոլար	**5 մլն** ԱՄՆ դոլար
Տարեկան եկամտաբերությունը	4.25%	4.25%	4.25%

- ✓ 27 ամիս ժամկետայնություն
- ✓ Արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականություն

Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)

2023 թվականի վերջի դրությամբ թողարկման պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է մոտ 33.1 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 2.0 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր:

2023 թվականի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 7 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 28.1 մլն ԱՄՆ դոլար և 2.0 մլն ՀՀ դրամ:

Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓Գնաճի ռիսկ

31/12/2023թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

2

Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձը 10

Վարչության նախագահի ուղերձը 11

ՀՀ տնտեսությունը 12

Մեր ռազմավարական արդյունքները 15

Ֆինանսական արդյունքները 19

Մեր անձնակազմը 22

Խորհրդի նախագահի ուղերձը

Արթուր Ջավադյան
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Արթուր Ջավադյանը ծնվել է 22.04.1964թ.:

1986թ. ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը, ապա՝ 1989 թվականին՝ «Հայգյուղմեքենայացում» ԳԱՄ ասպիրանտուրան:

1989-1991 թվականներին աշխատել է «Երևան» բանկում՝ տարբեր ղեկավար պաշտոններում, իսկ 1991-2000 թվականների ընթացքում՝ «Հայինվեստ» բանկում:

1997-2020 թվականների ընթացքում ՀՀ Կենտրոնական Բանկում զբաղեցրել է Խորհրդի անդամի, ՀՀ ԿԲ նախագահի խորհրդականի, նախագահի տեղակալի, ապա՝նախագահի պաշտոնները:

Որպես ԿԲ նախագահ 2008-2020 թվականների ընթացքում հանդիսացել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ, «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ, «ԱԶԲԱ» վարկային բյուրոյի, «ԱրՔա» համակարգի, «Հայինկասացիա» ՓԲԸ խորհրդի նախագահ, Հայաստանի ֆոնդային բորսայի խորհրդի անդամ:

2020 թվականից նա հատուկ հանձնարարություններով ՀՀ դեսպան է:

Հարգելի՛ հաճախորդներ և գործընկերներ,

2023 թվականին մենք իրագործել ենք Բանկի առջև դրված բոլոր նպատակներն ու գերազանցել տարվա համար սահմանված նշաձողերը:

2023 թվականին մեր պետության և յուրաքանչյուրիս համար ծանր շրջանում Բանկը հանդես եկավ ճիշտ ժամանակին ու մանրամասն մշակված լուծումներով՝ կանգնելով Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների կողքին ոչ միայն աջակցության ձևաչափով, այլև ֆինանսական օգտակար գործիքներ տրամադրելով:

Տարվա ընթացքում շարունակել ենք թվային ծառայությունների կատարելագործումն ու մեր հաճախորդների պահանջներին համապատասխան գործիքների մշակումը՝ բարելավելով Idram&IDBank առցանց հարթակը, նոր լուծումներ ավելացնելով ու էլ ավելի հարմարավետ փորձառություն տրամադրելով մեր հաճախորդներին: Վստահ կարող եմ ասել, որ Իդրամի հետ սերտ համագործակցության արդյունքում մենք պահպանում ենք «լավագույն ֆինտեխ հարթակ» կոչվելու իրավունքը:

2023 թվականին Բանկի համար կարևոր իրադարձություն տեղի ունեցավ. IDBank-ն ու Իդրամը համախմբվեցին ID Group հայկական հոլդինգային ընկերությունում, որը ներկայում վերահսկում է երկու ընկերությունների բաժնետոմսերի 100%-ը: ID Group-ի ստեղծումը կարևոր իրադարձություն էր հայաստանյան ֆինանսական շուկայում, քանի որ համատեղում է IDBank-ի և Idram-ի ուժեղ կողմերը ID Group-ի ընդհանուր տեսլականի ներքո: Այսպես՝ ընկերությունները միասին պատրաստ են առաջնորդել Հայաստանում և դրա սահմաններից դուրս թվային ֆինանսների ապագայի ձևավորման ճանապարհը:

2024 թվականին մենք շարունակելու ենք սահմանել բարձր նշաձողեր ու հասնել դրանց՝ մեր գործունեության կենտրոնում պահելով մեր հաճախորդներին:

Շնորհակալություն, որ մեզ հետ եք:

Հարգանքով՝
Խորհրդի նախագահ
Արթուր Ջավադյան

Վարչության նախագահի ուղերձը

Միհեր Աբրահամյան

Վարչության նախագահ

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:

1997թ.-ին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը, , իսկ 2004թ.-ին՝ ԱՄՆ-ի Թաֆթս համալսարանի Ֆլեթչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցը:

Ունի Լիազորված ֆինանսական վերլուծաբանի (CFA) I, II մակարդակների որակավորում:

1999թ.-ից աշխատել է ՀՀ ԿԲ-ում՝ դրամավարկային քաղաքականության դեպարտամենտում որպես տնտեսագետ, ավագ տնտեսագետ, մակրոտնտեսագետ:

2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության բանկային համակարգի կարգավորման բաժնի պետ:

2012 - 2018թթ. զբաղեցրել է Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետի պաշտոնը:

2019 թվականից առ այսօր IDBank-ի վարչության նախագահն է:

Հարգելի գործընկերներ և հաճախորդներ,

2023 թվականը մարտահրավերներով լի հերթական տարին էր Բանկի համար: Այս տարվա ընթացքում մենք հասցրել ենք ոչ միայն հաղթահարել առկա մարտահրավերներն ու խնդիրները, այլև զգալի աճ գրանցել գրեթե բոլոր ուղղություններով:

Եվ այսպես, 2023 թվականին IDBank-ն ամրապնդեց իր դիրքերը Հայաստանում հինգ ամենաշահութաբեր բանկերի շարքում, իսկ եկամտաբերությամբ դարձավ 4-րդը: Բացի այդ, Moody's հեղինակավոր միջազգային վարկանիշային գործակալությունը բարձրացրեց IDBank-ի ազգային արժույթով և արտարժույթով երկարաժամկետ բանկային ավանդների վարկանիշը՝ B2-ից B1՝ կայուն հեռանկարով: Վարկային պորտֆելի աճով, թողարկված քարտերի քանակով և մի շարք այլ ցուցանիշներով IDBank-ը շարունակում է առաջատար դիրքեր զբաղեցնել շուկայում:

Բացի նախատեսված ծրագրերից՝ Բանկը իրականացրեց նաև որոշակի արտահերթ միջոցառումներ՝ Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար փոքր-ինչ մեղմելու ճգնաժամը: Մենք ոչ միայն աջակցության ծրագրեր մշակեցինք, որոնք դեռ շարունակելու ենք իրականացնել 2024 թվականին, այլև ստեղծեցինք ֆինանսական գործիքների ամբողջական արտոնյալ փաթեթ՝ «Հայրենակից»-ը, որն առաջին անհրաժեշտության ծառայությունների համախումբ էր՝ նախատեսված տեղահանված մեր հայրենակիցների համար:

2023 թվականին Բանկը թողարկեց Հայաստանում առաջին մետաղական քարտը՝ Visa Infinite Special Edition պրեմիում դասի քարտը, որն ամենալայն հնարավորություններն ու լավագույն փորձառությունն է խոստանում Բանկի քարտապաններին՝ տրամադրելով արտոնությունների մեծ փաթեթ: Պրեմիում հաճախորդների համար ևս մեկ նորություն էր նախատեսված, և 2023-ին Բանկը մեկնարկեց IDBank Concierge ծրագիրը, որը ստեղծվեց հաճախորդներին 24/7 աջակցություն ցույց տալու համար:

IDBank-ը 2023-ին դարձավ անկանխիկ գործարքների առաջատար բանկ. Հայաստանում իրականացվող անկանխիկ գործարքների մոտ 30%-ը կատարվում է IDBank-ի քարտերով: Ինչ վերաբերում է Բանկի քարտերին, ապա կարևոր է նշել նաև, որ տարեկան քարտային գործարքների թիվն աճել է140%-ով:

IDBank-ի և Իդրամ ընկերության համատեղ թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդների թիվն աճել է 32%-ով, և սա դեռ միայն սկիզբն է:

Իդրամ ընկերության հետ համագործակցությունը հիշատակելիս անհրաժեշտ եմ համարում նշել, որ 2023 թվականի վերջում IDBank-ն ու Իդրամը համախմբվեցին ID Group հայկական հոլդինգային ընկերությունում, որը ներկայում վերահսկում է երկու ընկերությունների բաժնետոմսերի 100%-ը: ID Group-ի ստեղծումը կարևոր իրադարձություն էր հայաստանյան ֆինանսական շուկայում, քանի որ համատեղում է IDBank-ի և Idram-ի ուժեղ կողմերը ID Group-ի ընդհանուր տեսլականի ներքո:

Վստահ եմ, որ 2024 թվականին շարունակելու ենք նոր նշաձողեր սահմանել՝ մեր գործունեությունը ծավալելով հաճախորդների շուրջ և հաճախորդների համար:

Շնորհակալություն վստահության համար

IDBank-ի Վարչության նախագահ
Միհեր Աբրահամյան

ՀՀ տնտեսությունը

Տնտեսական ակտիվության ցուցանիշ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ հիմնական բաղադրիչների ,ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2023 թվականի արդյունքներով Հայաստանում արձանագրվել է տնտեսական ակտիվության աճ 9.4%-ով, ՀՆԱ-ն աճել է 8.7%-ով:

2024 թվականին աշխարհաքաղաքական անորոշ զարգացումներով պայմանավորված՝ կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում մինչև 6-7%:

ՀՀ տնտեսություն

Միջին տարեկան փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ,%)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

2023 թվականի ընթացքում շարունակվել է դրամի էական արժևորումը դոլարի նկատմամբ:

2023-ի դեկտեմբերին Հայաստանում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ՀՀ սպառողական շուկայում գրանցվել է 0.6% գնանկում:

ԿԲ-ն արձագանքելով գնաճային միջավայրի փոփոխություններին՝ աստիճանաբար նվազեցրել է վերաֆինանսավորման դրույքաչափը՝ տարեվերջին սահմանելով 9.25%:

Ֆինանսական համակարգ

Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկային ավանդներ և վարկեր, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների միջին տոկոսադրույք



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

2023 թվականի արդյունքներով Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 54%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8 տոկոսային կետով:

2023 թվականի ընթացքում 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների տոկոսադրույքները համեմատաբար կայուն են մնացել:

Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Մեր ռազմավարական արդյունքները

Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Մեր հիմնական նպատակը հաճախորդներին լավագույն փորձառություն ապահովելն է: Որպես նորարարությամբ ոգեշնչվող կառույց՝ մենք առաջարկում ենք թվային հարթակ, որը թույլ է տալիս տրամադրել արագ, հարմարավետ և ապահով հեռավար ծառայություններ: Մենք մշտապես ընդլայնում ենք մեր թվային պրոդուկտների և ծառայությունների շրջանակը՝ ստեղծելով հաճախորդակենտրոն էկոհամակարգ՝ բաղկացած ամենօրյա բանկային, ֆինանսական, գործարքային ծառայություններից, BNPL լուծումներից և հավատարմության համակարգից: Այս ամենը մեզ թույլ է տալիս այսօր հայկական շուկայում թվային ուղղվածություն ունեցող ակտիվ հաճախորդների թվով առաջատար լինել:

2023 թվականը բանկի համար ռազմավարական ոլորտներում դինամիկ աճի ևս մեկ տարի էր: Տարեվերջին մեր նորարարական BNPL լուծումը՝ Rocket line-ը հասանելի դարձավ ավելի քան 19,000 առկա և առցանց վճարման կետերում, որոնցից 8,000-ը տրամադրեցին անտոկոս վճարումներ (Rocket line 0%): Մենք արձանագրել ենք Rocket line-ով գնումների 50% աճ՝ գործարքների ընդհանուր ծավալը գերազանցել է 1,4 մլն-ը, իսկ տրամադրված ապառիկ վարկերի ծավալն աճել է 62%-ով: Rocket line 0% գործարքները մեկ տարվա ընթացքում աճել են 2 անգամ:

Մենք շարունակեցինք ամրապնդել մեր առաջատար դիրքը թվային մանրածախ առևտրի, քարտերի և վճարումների ոլորտում: Թողարկված քարտերի ընդհանուր թիվը 2023 թվականին գերազանցել է 450,000-ը, իսկ քարտերով գործարքների թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 3.2 անգամ, մինչդեռ գործարքների ծավալն աճել է 139%-ով: Մեր արտոնյալ հաճախորդների համար մենք թողարկեցինք առաջին մետաղական քարտը Հայաստանում՝ ուղղահայաց դիզայնով և բացառիկ առավելություններով:

Մեր քարտերով, առցանց և QR կոդով, ինչպես նաև մեր POS/vPOS-ով կատարված անկանխիկ գործարքների ծավալը կազմում է հայաստանյան շուկայում բոլոր անկանխիկ վճարումների 30%-ը:

Բացի թվային մանրածախ առևտրից, մենք ուշադրության կենտրոնում ենք պահում միկրո, փոքր և միջին բիզնեսի համար նախատեսված համապարփակ ծառայությունները՝ տրամադրելով լավագույն փաթեթային լուծումները: Նման հաճախորդների թիվն աճել է 33%-ով՝ գերազանցելով 20 հազարը, և մենք ակնկալում ենք մեր ջանքերի շնորհիվ արդունավետության զգալի ավելացում առաջիկա տարիներին:

Թվային ուղիներում գրանցված ակտիվ հաճախորդների մասնաբաժինը



2023 թվականի վերջի դրությամբ մեր ակտիվ հաճախորդների 83%-ը գրանցված է Բանկի թվային հարթակներում, իսկ նրանց ավելի քան 63%-ը ակտիվ է թվային ուղիներում ամսական կտրվածքով:

Մենք մշտապես հետևում ենք ոլորտում տեղի ունեցող զարգացումներին և միտումներին, շարունակական ընդլայնելով մեր նորարարական գործունեությունը, մեր հաճախորդների համար դառնալով առաջին ընտրության ֆինանսական գործընկեր:

Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

600,000+ օգտատեր՝
Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 40%-ը

Թվային **բանկինգի լիարժեք ֆունկցիոնալություն**

Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում
սմարթֆոնի միջոցով

15 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր,
համագործակցություն 1000+ ծառայություններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները

Անհպում QR վճարումներ 19000+ ֆիզիկական վաճառակետերում,
ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն

Ապահով վճարում
Հայաստանի **ավելի քան 900 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով**

Ինտեգրված **ստացիր հիմա վճարիր հետո** լուծումը առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ **19,000+ POS-ով,** ներառյալ **8,000+ POS, որը տրամադրում է մինչև 6 ամիս Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն**

400,000+ ակտիվ քարտեր

Առաջատարը Հայաստանում՝ VISA քարտերի թողարկման ոլորտում

P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով
Հայաստանում և արտերկրում

Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝ անհպում QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ

Id+ հավատարմության թվային հարթակ վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով **առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)**

Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.

Բազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ

Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր

Privilege/Private banking

24/7 ինքնասպասարկման գոտիներ



24/7 կոնտակտային կենտրոն

Կորպորատիվ հաճախորդներ

~ 21 հազ հաճախորդ

+30% տարեկան

Բանկը շարունակաբար զարգացնում է կորպորատիվ հաճախորդների սպասարկման մշակույթը՝ առաջարկելով համալիր ֆինանսական ծառայություններ և լուծումներ բոլոր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների զարգացման և բարգավաճման համար: 2023 թվականի ընթացքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ Հաճախորդների ծավալի աճ՝ 30% տարեկան, ընդ որում, ակտիվ հաճախորդների դեպքում՝ 32% տարեկան
- ✓ Թվային ապառիկի շուկայի մասնաբաժնի ընդլայնում: Rocket line 0% թվային ապառիկի գործընկերների շարքերը համալրել են ավելի քան 3,000 առևտրային կետեր՝ ապահովելով շուրջ 60% տարեկան աճ
- ✓ Անկանխիկ վճարման նոր գործիքի ներդրում՝ բջջային հեռախոսի վրա ակտիվացվող SoftPOS վճարային տերմինալ
- ✓ Անկանխիկ վճարային գործիքների ոլորտում՝ POS/VPOS տերմինալների քանակի շուրջ 30% տարեկան աճ և շրջանառության ծավալների ավելի քան 200% տարեկան աճ
- ✓ Բիզնես քարտերի վաճառքի ծավալի աճ. Visa Business Platinum պրեմիում դասի՝ ավելի քան 400% տարեկան և Visa Business դասի՝ ավելի քան 40% տարեկան

Մանրածախ հաճախորդներ

~ 560 հազ հաճախորդ

+12% տարեկան

2023 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը շուրջ 560,000 է: Բանկը մշտապես զարգացնում է իր գործող ծառայությունները, մշակում և ներդնում է նորը՝ հաճախորդներին առաջարկելով լավագույն լուծումները: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ Առաջինը Հայաստանում էքսկլյուզիվ պայմաններով, ուղղահայաց դիզայնով և մետաղական հիմքով Visa Infinite Special Edition քարտի թողարկում՝ լավագույն ծառայությունների փաթեթով
- ✓ IDBank concierge ծառայության ներդնում պրեմիում քարտապանների համար
- ✓ Միջազգային փոխանցումներ Visa direct քարտապանների համար
- ✓ Մանրածախ ընդհանուր հաճախորդների 12%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում 24% տարեկան աճ
- ✓ Վճարային քարտերի մոտ 22% տարեկան աճ
- ✓ Քարտով վճարումների քանակի աճ 242%
- ✓ Մանրածախ վարկային պորտֆելի 22% տարեկան աճ

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

2023 թվականը «Մի դրամի ուժը» մեկնարկել է 155 միլիոն դրամի շեմը հատած:

- Տարվա առաջին ծրագիրը՝ **հունվար** ամսվա կուտակված 3.008.215 դրամ գումարը «Մի դրամի ուժն» ուղղել է «Երաժշտություն հանուն ապագայի» հիմնադրամի «Տալենտում» կրթական ծրագրին:

- **Փետրվար** և **մարտ** ամիսներին «Մի դրամի ուժը» աջակցեց Արցախում արևային ջրաջեռուցիչների տեղադրման նախագծին, որի դրամահավաքը նախաձեռնել էր «Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը:

- **Ապրիլ** ամսվա շահառու ընտրվեց Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտման ծրագիրը, որի նպատակը պատերազմի ընթացքում վիրավորում ստացած, ՀՀ մարզերում բնակվող զինվորների սոցիալ-տնտեսական վերաինտեգրումն է՝ աշխատանքի և աշխատելու մոտիվացիան խթանելու միջոցով:



- «Մի դրամի ուժը» նախագծի **մայիս** ամսվա գումարը կազմեց 3.520.698 դրամ, որն ուղղվեց էպիլեպսիայով հիվանդ երեխաների բուժմանը: Շահառուն հանդիսացավ «Կյանքի ճանապարհ» հասարակական կազմակերպությունը, որը էպիլեպսիա ունեցող երեխաներին ապահովում է ախտորոշմամբ, դեղորայքով և անհրաժեշտ բուժմամբ:

- **Հունիսի** ընթացքում կատարված վճարումներից կուտակված 3.482.779 դրամ գումարն ուղղվեց «Հայորդի» ամենամյա ճամբարի տարածքի բարեկարգման ու կահավորման աշխատանքներին: «Հայորդի» ճամբարի շահառուները պատերազմի հետևանքով ծնող կորցրած երեխաներն էին՝ Արցախի և Հայաստանի գրեթե ողջ տարածքից:

- **Հուլիս** ամսվա ընթացքում կուտակված 3.480.466 դրամ գումարը նվիրաբերվել է «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի՝ գյուղական համայնքների երեխաների որակյալ կրթության հասանելիությանն ուղղված ծրագրին:

- **Օգոստոս** ամսին կուտակված 3.500.572 դրամ գումարը նվիրաբերվել է «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին, որն աջակցում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին, երիտասարդներին և իրենց ընտանիքներին՝ նպաստելով համայնքների զարգացմանը:

- **Սեպտեմբերի** «Մի դրամի ուժի» շահառուն «Հայքն աշխարհին» կրթական ծրագիրն էր, որին Իդրամ և IDBank ընկերությունները նվիրաբերեցին 3.397.784 ՀՀ դրամ: Ծրագրի նպատակն էր Արցախի երիտասարդների համար ստեղծել հնարավորություն ստանալու համապատասխան թվային կրթություն:

- **Հոկտեմբեր** ամսվա ընթացքում «Մի դրամի ուժի» հավաքված ողջ գումարը՝ 3.580.216 դրամ, փոխանցվեց «Հայորդի» նախաձեռնությանը, որն այդ օրերին իր հարկի տակ էր հյուրընկալել արցախյան պատերազմների զոհերի ընտանիքներին:

- **Նոյեմբերի** ընթացքում կուտակված 3.588.848 դրամը փոխանցվեց Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար Սյունիքում ջերմոցների կառուցման ծրագրին:

- Տարվա վերջին՝ **դեկտեմբեր** ամսվա «Մի դրամի ուժը՝ 3.945.010 դրամ գումարն ուղղվեց Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամին:

Տարվա վերջին աշխատանքային օրը IDBank-ն ու Իդրամը հյուրընկալեցին կրկնակի զոհ ունեցած արցախցիների ընտանիքների ներկայացուցիչներին:

Նվերներից բացի ընկերությունները միջոցառման մասնակիցներին հանձնեցին idplus լոյալության հարթակի 150.000 դրամ արժողությամբ նվեր քարտեր: Ծրագիրն իրականացվեց «Հայորդի» նախաձեռնության հետ գործակցությամբ:

Ֆինանսական արդյունքներ

Արման Ասատրյան

Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն

2023 թվականը ամփոփվել է ֆինանսական արդյունքների զգալի առաջընթացով: Տարեվերջի դրությամբ Բանկի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 367 մլրդ ՀՀ դրամ՝ արձանագրելով 18.7% աճ 2022թ տարեվերջի համեմատ: Ակտիվների մոտ 43%-ը (159 մլրդ ՀՀ դրամ) կազմում են հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները: Վարկային պորտֆելի աճը պայմանավորված է ֆիզիկական անձանց (+22%) և իրավաբանական անձանց (+45%) վարկերի աճով:

2023 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 303 մլրդ ՀՀ դրամ, որի մոտ 74% կազմել են հաճախորդների ընթացիկ հաշիվները, ավանդները և Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը:



Բանկը արձանագրել է շուրջ 15.8 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ: Արդյունքում, բանկը շուկայում զբաղեցրել է 3-րդ դիրքը երկու ցուցանիշներով՝ կապիտալի շահութաբերություն (ROE)՝ 25.8% և ակտիվների շահութաբերություն (ROA)՝ 4.7%: Շահութաբերության բարձր մակարդակին նպաստող հիմնական գործոններից մեկը զուտ ոչ տոկոսային եկամուտն է, մասնավորապես, Բանկը շուկայի առաջատարներից մեկն է առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտով՝ 8.5 մլրդ դրամ:

Վարկերի և կանխավճարների մասնաբաժինը ընդհանուր ակտիվներում

43%



Հաշվի առնելով, որ Բանկի կապիտալի համարժեքության, իրացվելիության մակարդակները գտնվում են բավականին բարձր մակարդակում և Բանկի զուտ մասհանումների մակարդակը ցածր է՝ Բանկը ունի լայն հնարավորություններ իր գործունեությունը ընդլայնելու և նոր նախագծեր իրականացնելու համար՝ չվնասելով Բանկի ֆինանսական կայունությանը՝ շարունակելով ստեղծել երկարաժամկետ կայուն արժեքներ իր բոլոր շահառուների համար:

Ֆինանսական արդյունքներ

Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)



Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Բանկի պորտֆելները

Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող) , մլն ՀՀ դրամ





Մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը



Կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը



Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլրդ դրամ)



Մեր անձնակազմը

Մեր աշխատակիցը մեր հաջողության գրավականն է: 2023 թվականի ընթացքում արձանագրված հաջողությունները, ձեռքբերումներն ու իրականացած նպատակները ևս մեկ անգամ փաստում են, որ ցանկալի արդյունքի հասնելու գրավականը թիմային աշխատանքն է: Թիմի նվիրվածության ու համընդհանուր նպատակի շուրջ համախմբվածության շնորհիվ այս տարի ևս հնարավոր դարձավ ապահովել բարձր կատարողականներ, ստեղծել նոր արժեքներ, իրագործել հետաքրքիր գաղափարներ և կատարելագործել նախորդ տարիների ընթացքում ձեռքբերած արդյունքները:

Բանկը, որպես գործատու, անում է հնարավոր ամեն բան աշխատանքային միջավայրը շարունակաբար բարելավելու, էլ ավելի ապահով և գրավիչ դարձնելու, աշխատակիցների համար ֆինանսական և ոչ ֆինանսական մոտիվացիոն համակարգերի ներդնելու համար:

2023թ. շարունակեցինք գոհունակության բարձրացմանը միտված քայլերը, ինչպես նաև նոր հնարավորություններ ստեղծեցինք մշտական մասնագիտական աճի և մասնագիտական հմտությունների բարելավման, նոր գիտելիքների ձեռքբերման համար:

Բանկի ներքին մշակույթի մաս է շարունակական կրթությունն ու զարգացումը. ներքին կորպորատիվ ու ուսումնական պորտալները լայն հնարավորությունների դաշտ են ստեղծում աշխատակիցների համար, զուգահեռ շարունակվում է կարևորվել միջազգային որակավորումները և ոլորտի լավագույն դասընթացավարների ներգրավումը միջին և բարձր օղակի ղեկավարների շարունակական զարգացման համար:

Այս տարին ևս առանձնացավ զանազան թիմային միջոցառումներով հագեցվածությամբ: Նախաձեռնված միջոցառումներն ավելի ջերմացրին և ամրապնդեցին մեր աշխատակիցների աշխատանքային հարաբերությունները և հնարավորություն տվեցին համատեղել աշխատանքն ու հանգիստը:

Սոնա Մանուչարյան
Մարդկային կապիտալի կառավարման գծով տնօրենի ժ/պ

735 Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2023 թվականի վերջի դրությամբ

Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմային ենք – թիմայնությունը Բանկի հիմնական արժեքներից է և հանդիսանում է կորպորատիվ մշակույթի ձևավորման հիմնասյունը ու պարտադիր պայմանը հաջողության հասնելու համար:

Այս տարի ևս կազմակերպվեցին բազմաթիվ թիմային և կորպորատիվ միջոցառումներ, թիմային աշխատանքի զարգացման նպատակով շարունակական ռազմավարական հանդիպումներ, ինչպես նաև աշխատակիցների կատարողականով պայմանավորված խրախուսումներ:

Բանկի կողմից կազմակերպված բազմաթիվ միջոցառումները հնարավորություն տվեցին աշխատակիցներին հաղորդակցվել աշխատանքից դուրս և միասին աջակցել տարբեր սոցիալական նախագծերի: Շարունակեցինք հնարավորություն տալ աշխատակիցներին առավել ճկուն աշխատանքային ռեժիմով աշխատել, օգտագործել հնարավորությունը հեռավար և առկա ռեժիմով սահուն աշխատանքի համար:

2023թ. ընթացքում կորպորատիվ սոցիալ պատասխանատվության ծրագրերն անդրադարձան և՛ երեխաներին, և՛ անապահով ընտանիքներին, և՛ զինվորներին, ինչպես նաև սահմանամերձ գյուղերի բնակիչներին:

Վարձատրություն և մոտիվացիա

Բանկի ուշադրության կենտրոնում է ֆինանսաբանկային ոլորտի վարձատրության և արտոնությունների շուկայի վերլուծության իրականացումն ու առկա տենդենցներին մշտապես հետևելը , ինչպես նաև ժամանակին ու պատշաճ արձագանքի ապահովումը:

Բանկը աշխատակիցներին խրախուսում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական եղանակներով: Բանկի արտոնությունների փաթեթը մշտապես վերանայվում և թարմացվում է:

Լավագույն կատարողական ցուցաբերած աշխատակիցների համար կազմակերպվեցին հանդիպումներ Վարչության նախագահի հետ՝ տրամադրվեցին արժեքավոր նվերներ և հնարավորություն նման միջավայրում քննարկել աշխատանքային հաջողություններն ու հետագա մասնագիտական զարգացումը:

Աշխատավարձի պարբերական վերանայումները, ինչպես նաև պարգևավճարի ճկուն մոդելները շարունակաբար կատարելագործվում են որպես Բանկի աշխատակիցների նյութական խրախուսման մշակույթի տարր:

Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն

2023 թվականի ընթացքում Բանկի թիմը համալրվել է 214 նոր աշխատակիցներով:

Շարունակելով կարևորել անձնակազմի ներքին զարգացումն ու առաջընթացը՝ թափուր հաստիքների շուրջ 31%-ը համալրվել է ներքին թեկնածուների շնորհիվ՝ համալրելով ինչպես մասնագետների, այնպես էլ ղեկավար հաստիքներ:

Բանկի անձնակազմի ներգրավման քաղաքականության կարևոր մաս է կազմում ուսանողների հետ աշխատանքը՝ մեկտեղելով սկսնակ մասնագետների ձևավորումն ու ոլորտի առաջատար մասնագետներին մեր շարքեր ներգրավելու գործընթացը:

Երևանի Կոնտակտային կենտրոնին զուգահեռ Գյումրու Կոնտակտային կենտրոնը սկսեց իր աշխատանքը 3 աշխատակցով, իսկ 2023թ. մեծացել և դարձել է մի մեծ թիմ՝ շուրջ 20 աշխատակից: Նրանց համար կազմակերպվեցին բազում դասընթացներ, արդյունքում ունեցանք ոչ միայն ավելի շատ զանգեր սպասարկելու հնարավորություն, այլ նաև ավելի որակյալ սպասարկում և հիասքանչ հաճախորդամետություն՝ Բանկ զանգահարած մեր բոլոր հաճախորդներին:

Կորպորատիվ մշակույթ և ներքին հաղորդակցում

Հավատարիմ մնալով մեր արժեքներին ու սկզբունքներին՝ Բանկը շարունակում է զարգացնել կորպորատիվ մշակույթն ու ներքին հաղորդակցման ուղիները:

Կորպորատիվ հաղորդակցման հարթակի շնորհիվ աշխատակիցները հնարավորություն ունեն ժամանակին ու պատշաճ ծանոթանալ առկա նորությունների ու տեղի ունեցող փոփոխություններին, մասնակցել հարցումների ու հանդես գալ առաջարկություններով, մասնակցել տարբեր հետաքրքիր օնլայն մրցույթների և ինտերակտիվ հարցումների:

Համագործակցություն ուսանողների հետ. Idream ծրագիր

Որակյալ կրթությունը մեր առաջնահերթություններից է: Բանկն ակտիվ համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և որոշակիորեն մասնակցում է ոչ ֆորմալ կրթությանը՝ ուսանողներին ընձեռելով բանկային ոլորտին ծանոթանալու հնարավորություն:

2023թ. Բանկը կազմակերպեց ուսանողների համար IDream ուսումնական ծրագիրը 4 անգամ՝ հնարավորություն տալով ևս 99 նորավարտ ուսանողի սկսելու իրենց կարիերան Բանկի հետ: Այս ծրագրի շնորհիվ բոլոր ուսանողները ստանում են ֆինանսաբանկային ոլորտի տեսական և գործնական գիտելիքներ, ձևավորում հմտություններ, որոնք անհրաժեշտ են Բանկային ոլորտի սկսնակ աշխատակցին:

Այս տարի նաև կազմակերպվեց հատուկ կարևորության IDream Արցախը՝ հնարավորություն տալով մեր Արցախցի ուսանողներին արագ ինտեգրվել և աշխատանք գտնել:

Աշխատակիցների ուսուցում և զարգացում

Բանկի Ուսուցման և զանգացման կենտրոնը տարվա ընթացքում կազմակերպել և վերահսկել է 200-ից ավել օնլայն և օֆլայն վերապատրաստման դասընթացներ, կիսվել զանազան նյութերով, հետաքրքիր զարգացնող գրականությամբ և պրեզենտացիաներեով: Աշխատակիցները հնարավորություն ունեն վերապատրաստվել ոչ միայն արտաքին կամ Բանկում կազմակերպվող դասընթացների մասնակցելով, այլ նաև առցանց հարթակի միջոցով՝ իրենց հարմար ժամանակացույցով ու արագությամբ:

2023 թվականի ընթացքում աշխատակիցների 80%-ը վերապատրաստվել է, որոնց 78%-ը մասնակցել է ներքին վերապատրաստման դասընթացների, իսկ 41%-ը վերապատրաստվել է՝ մասնակցելով արտաքին դասընթացների:

Բանկը մշտապես խրախուսում ու աջակցում է աշխատակիցներին ստանալու միջազգային որակավորումներ ու հավաստագրեր, ինչպես նաև նպատակ ունի վերին և միջին օղակի ղեկավարների համար միջազգային որակավորումների պահանջ սահմանել՝ ցուցաբերելով ֆինանսական աջակցություն տվյալ գործընթացում:

3

Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 26

Ռիսկերի կառավարում 28

Բանկի խորհուրդը

Արթուր Ջավադյան
Խորհրդի նախագահ
Որպես ԿԲ նախագահ 2008-2020 թվականների ընթացքում հանդիսացել է «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ, «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ, «ԱԶԲՌԱ» վարկային բյուրոյի, «ԱրՔա» համակարգի, «Հայինկասացիա» ՓԲԸ խորհրդի նախագահ, Հայաստանի ֆոնդային բորսայի խորհրդի անդամ:
2020 թվականից նա հատուկ հանձնարարություններով ՀՀ դեսպան է:

Կարեն Մարգարյան
Կարեն Մարգարյանը տնտեսագիտության դոկտոր է, տեխնիկական գիտությունների թեկնածու՝ ավելի քան 37 տարվա փորձով ղեկավար պաշտոններում: 2016 թվականից «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ է: Ունի գիտական կոչումներ և հեղինակ է տնտեսագիտության ու կառավարման վերաբերյալ ավելի քան հիսուն գիտական աշխատությունների:

Ֆերնանդո Կաստինյեիրաս
Ստացել է մագիստրոսի կոչում Warwick Business School-ից (Մեծ Բրիտանիա) 2003 թվականին, ապա ավարտել Global CEO ծրագիրը 2018-ին, որն իրականացվել է IESE (Իսպանիա), Wharton Business School (ԱՄՆ) և CEIBS (Չինաստան) կողմից: 1996 թվականից նա մասնակցել է չորս տարվա միջազգային փորձի ծրագրին՝ ներառյալ աշխատանքը Լոնդոնի Գլոբալ ներդրումային բանկային խմբում: 2002 թվականին նա համահիմնադրել է Management Solutions (MS) միջազգային խորհրդատվական ընկերությունը: 2016 թվականից նա Athos Capital, SGEIC, S.A.-ի հիմնադիրն է, նախագահն ու գործադիր տնօրենը:
2024 թվականից «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ է:

Ելենա Խաչվանքյան
Ֆինանսների և կառավարման մասնագետ է, ունի ակադեմիական և գործնական մեծ փորձ: Ավարտել է ecoDa-ի European Board Diploma ծրագիրը, որը նրան տվել է կորպորատիվ կառավարման ոլորտում ժամանակակից գիտելիքներ: Ներկայում զբաղեցնում է խորհրդատուի պաշտոն մի շարք միջազգային ֆինանսական հաստատություններում:
Ելենան մեծ փորձ ունի ռազմավարական պլանավորման, լայնածավալ ենթակառուցվածքային նախագծերի, հարկաբյուջետային ռիսկերի գնահատման և զարգացման ֆինանսավորման մեջ: Նա զգալի ներդրում է ունեցել այս ոլորտներում բարեփոխումների իրականացման գործում:

Անդրեաս Բլազե
Ծնվել է Գերմանիայում, ավարտել Օտտո Բայսհայմի անվան կառավարման դպրոցը (WHU): Նա ունի 15 տարվա բազմազան փորձ՝ մասնավորապես ներդրումների, պորտֆելի կառավարման, թվային փոխակերպման և գործառնական կառավարման մեջ:
2024 թ. հունվարից Անդրեաս Բլազեն հանդիսանում է AURELIUS Wachstumskapital-ի (Գերմանիա) գործառնական գործընկեր: Զբաղեցրել է առանցքային պաշտոններ CECONOMY AG-ում և եղել է Ֆեդերալ-Մոգուլ (ԱՄՆ) Միաձուլումների և ձեռքբերումների ու ռազմավարության տնօրեն:
2024 թվականից հանդիսանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ խորհրդի անդամ:

2023

“ID Group” CJSC
100% բաժնետեր

Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների հաստատումը,
4. շահաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր Ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացումը,
7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
8. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
9. Օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը:

Բանկի խորհուրդ

↓

Խորհրդին կից ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտե

↓

Հիմնական նպատակը

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության բարձրացումը, տվյալ համակարգերի գործունեության հարցում Բանկի խորհրդի կառավարչական և հսկողական գործառույթների իրականացման ապահովումը

Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝

1) Բանկի խորհրդի կողմից Բանկի գործադիր մարմինների գործունեության մշտական հսկողության ապահովումը և Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ Բանկի խորհրդի անդամների արդյունավետ փոխգործակցության ապահովումը Բանկի ղեկավարության հետ.
2) Ռիսկերի կառավարման համակարգերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության և համարժեքության գնահատումը, Բանկի ներքին վերահսկողության ռիսկերի վրա հիմնված համակարգի ձևավորմանը մասնակցությունը
3) Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և տրամադրումը Բանկի խորհրդին և Բանկի ղեկավարությանը:

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:
2023 թվականի 2-րդ կիսամյակում Բանկի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 18.9% (պահանջվող նվազագույն մեծությունը 11% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 35.8% և 73.3% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1



Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցունակության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ, սքորինգային մոդելների մշակմամբ և շարունակական թարմացմամբ:

Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հետևում է ինչպես իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվներին (ընդհանուր, ընթացիկ, LCR, NSFR իրացվելիության նորմատիվներ), այնպես էլ վերջիններիս ներքին՝ ավելի խիստ սահմանաչափերին:

Բացի նշվածից, իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է նաև Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդելի և սթրես-թեստավորման միջոցով:

Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով՝ նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման նպատակով Բանկը իրականացնում է արտարժութային բաց դիրքերի կառավարում՝ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի մշտադիտարկում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում:

Բանկը շարունակական քայլեր է ձեռնարկում տեղեկատվական անվտանգության համակարգերի զարգացման, առցանց զեղծարարության կանխարգելման ուղղություններով:

Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյթինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդրել է Ռիսկի ախորժակի մոնիթորինգի համակարգ: Ռազմավարությամբ սահմանված ռիսկի ախորժակից շեղումների առկայության պարագայում Բանկը համապատասխան քայլեր է ձեռնարկում ռիսկերի նվազեցման ուղղությամբ:

Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:

31/12/2023թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:

4

Ֆինանսական հաշվետվություններ

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 32

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն 33

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն 33

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն 34

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն 34

Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

«Այ Դի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության
Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են «Այ Դի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա աուդիտորական ստուգում անցած ամբողջական ֆինանսական հաշվետվություններից:

Մեր կարծիքով, կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր բացահայտումները, որոնք պահանջվում են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների և դրանց վերաբերյալ աուդիտորական եզրակացության ընթերցմանը:

Աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2024թ. ապրիլի 23-ի մեր եզրակացությունում արտահայտել ենք չձևափոխված աուդիտորական կարծիք: Այդ եզրակացությունը ներառում է նաև տեղեկատվություն աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ:

Այլ հանգամանք

Բանկի 2022 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2023 թվականի ապրիլի 18-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ Ծանոթագրություն 1-ում նկարագրված հիմունքի համաձայն:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է, հիմնվելով *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* (վերանայված) աուդիտի միջազգային ստանդարտ 810-ին համապատասխան մեր կողմից իրականացրած ընթացակարգերի վրա, արտահայտել կարծիք այն մասին, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համահունչ են աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններին:

«Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան

Աուդիտի բաժնի գործընկեր՝	Ռուսլան Խորոշվիլի
Գլխավոր տնօրեն՝	Էրիկ Հայրապետյան
Պատասխանատու աուդիտոր՝	Ելենա Ադամյան

23 ապրիլի, 2024թ.

Ծանոթագրություն 1

Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների՝ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերությունը պետք է հրապարակի իր ֆինանսական հաշվետվությունները:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և կից ծանոթագրությունը, քաղված են Բանկի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտորական ստուգում անցած ֆինանսական հաշվետվություններից՝ պատրաստված համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Կից ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում ամբողջ պարզաբանող տեղեկատվությունը, որը ներկայացված է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում, մասնավորապես՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվությունը և այլ պարզաբանող տեղեկություններ, որոնց բացահայտումը պարտադիր է համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի հետ կարելի է ծանոթանալ «ԱյԴի Բանկ» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրոնային կայքում:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. հազ. դրամ	2022 թ. հազ. դրամ
Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	25,931,049	19,919,227
Տոկոսային ծախս	(7,098,421)	(6,885,962)
Զուտ տոկոսային եկամուտ	**18,832,628**	**13,033,265**
Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ	10,361,438	6,180,054
Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս	(6,863,060)	(4,562,552)
Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ	**3,498,378**	**1,617,502**
Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից	7,460,147	12,908,096
Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով	1,069,273	1,127,937
Զուտ իրացված վնաս ներդրումային արժեթղթերի գծով	(93,720)	(55,163)
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպությունների շահույթի բաժնեմաս	575,245	-
Զուտ այլ գործառնական եկամուտ	233,476	31,920
Գործառնական եկամուտ	**31,575,427**	**28,663,557**
Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ	(382,000)	(1,332,312)
Անձնակազմի գծով ծախսեր	(7,269,745)	(6,782,363)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	(4,741,784)	(3,825,080)
Շահույթ մինչև շահութահարկով հարկումը	**19,181,898**	**16,723,802**
Շահութահարկի գծով ծախս	(3,424,768)	(3,207,353)
Շահույթ տարվա համար	**15,757,130**	**13,516,449**
Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի		
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.		
– իրական արժեքի զուտ փոփոխություն	302,230	(570,786)
– շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	87,786	45,234
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	390,016	(525,552)
Այլ համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար՝ առանց շահութահարկի	**390,016**	**(525,552)**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	**16,147,146**	**12,990,897**

Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	36,606,515	36,273,430
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	8,606,787	15,725,509
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	63,515,077	41,858,155
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	449,838	351,121
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	10,812,707	7,804,552
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր		
- Բանկի կողմից պահվող	54,361,958	69,479,481
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	6,646,146	–
Հաճախորդներին տրված վարկեր	158,884,500	121,327,795
Առգրավված ակտիվներ	2,709,765	3,098,462
Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում	7,575,245	–
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	9,687,175	7,480,638
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	3,188,475	2,071,018
Այլ ակտիվներ	3,630,008	3,535,599
Ընդամենը ակտիվներ	**366,674,196**	**309,005,760**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	8,010,540	–
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	57,310,415	39,509,998
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	11,255	–
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	209,920,125	188,283,970
Ընթացիկ հարկային պարտավորություններ	2,258,501	2,993,571
Թողարկված պարտքային արժեթղթեր	15,506,851	12,895,735
Հետաձգված հարկային պարտավորություն	442,859	342,209
Վարձակալության գծով պարտավորություններ	3,415,391	2,194,220
Այլ պարտավորություններ	6,313,467	4,113,994
Ընդամենը պարտավորություններ	**303,189,404**	**250,333,697**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		
Բաժնետիրական կապիտալ	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ	5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ	–	96,917
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ	119,492	(270,524)
Չբաշխված շահույթ	24,379,351	19,859,721
Ընդամենը սեփական կապիտալ	**63,484,792**	**58,672,063**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**366,674,196**	**309,005,760**

Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2023թ. հազ. դրամ	2022թ. հազ. դրամ Վերադասակարգված
Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	26,275,698	18,928,749
Վճարված տոկոսներ	(6,746,112)	(6,626,890)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ	10,361,438	6,180,054
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ	(6,863,060)	(4,562,552)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով	272,222	1,127,937
Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից	8,288,866	14,620,190
Այլ ստացված եկամուտ	288,183	109,725
Անձնակազմի գծով ծախսեր և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ	(9,147,534)	(8,149,279)
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	678,417	(166,950)
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	7,293,125	(9,674,887)
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	(20,856,671)	(32,395,706)
Հաճախորդներին տրված վարկեր	(38,058,088)	(13,462,160)
Առգրավված ակտիվներ	572,884	848,710
Այլ ակտիվներ	(262,859)	(1,888,507)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	9,376,019	7,998,218
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	8,007,628	(13,011,495)
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	18,339,456	110,430,378
Այլ պարտավորություններ	104,285	520,878
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը	**7,923,897**	**70,826,413**
Վճարված շահութահարկ	(4,133,155)	(754,331)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքեր	**3,790,742**	**70,072,082**
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(11,910,651)	(1,757,047)
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում	(56,426,143)	(68,978,994)
Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից	9,463,826	982,664
Մուտքեր ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի մարումից	65,443,788	16,433,517
Ասոցիացված կազմակերպությունների ձեռքբերում	(7,000,000)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(3,493,292)	(1,470,706)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	8,124	139,333
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր	**(3,914,348)**	**(54,651,233)**
Դրամական հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	6,208,154	8,769,181
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	(3,982,629)	(6,646,600)
Մուտքեր ներգրավված միջոցներից	11,517,476	7,962,796
Ներգրավված միջոցների մարում	(3,290,975)	(1,966,894)
Վճարված շահաբաժիններ	(11,237,500)	-
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(276,834)	(214,376)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական հոսքեր	**(1,062,308)**	**7,904,107**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	**(1,185,914)**	**23,324,956**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	1,520,172	(6,760,161)
Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,174)	2,051
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	36,273,430	19,706,584
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	**36,606,515**	**36,273,430**

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

ՀՀ դրամ'000	Բաժնետոմ-բական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումայ ին արժեթղթեր ի իրական արժեքի փոփոխությ ան գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2022թ.	33,971,850	5,014,099	105,601	255,028	6,334,588	**45,681,166**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ տարվա համար	–	–	–	–	13,516,449	**13,516,449**
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
-Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	–	–	–	(570,786)	–	**(570,786)**
-Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	–	–	–	45,234	–	**45,234**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	–	(525,552)	–	**(525,552)**
Ընդամենը այլ համապարփակ վնաս	–	–	–	**(525,552)**	–	**(525,552)**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	–	–	–	**(525,552)**	**13,516,449**	**12,990,897**
Տեղափոխում վերագնահատումից ածից չբաշխված շահույթ	–	–	(8,684)	–	8,684	–
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**33,971,850**	**5,014,099**	**96,917**	**(270,524)**	**19,859,721**	**58,672,063**
Մնացորդը առ 1 հունվարի 2023թ.	33,971,850	5,014,099	96,917	(270,524)	19,859,721	**58,672,063**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք						
Շահույթ տարվա համար	–	–	–	–	15,757,130	**15,757,130**
Այլ համապարփակ վնաս						
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	–	–	–	302,230	–	**302,230**
Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետածգված հարկի	–	–	–	87,786	–	**87,786**
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս	–	–	–	390,016	–	**390,016**
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	–	–	–	**390,016**	–	**390,016**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	–	–	–	**390,016**	**15,757,130**	**16,147,146**
Վճարված շահաբաժիններ	–	–	–	–	(11,237,500)	**(11,237,500)**
Շենքերի վերագնահատումից ածի պահուստի հակադարձում	–	–	(96,917)	–	–	**(96,917)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**33,971,850**	**5,014,099**	–	**119,492**	**24,379,351**	**63,484,792**

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ԱյԴի Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2023 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Միեր Աբրահամյան	Վարչության նախագահ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արման Ասատրյան	Ներդրումային բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Կարեն Նալբանդյան	Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Արթուր Համբարձումյան	Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Անուշիկ Խաչատրյան	Գլխավոր հաշվապահ, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Սերգեյ Առաքելյան	Թվային բանկինգի տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Տիգրան Մխիթարյան	Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)
Լիլիթ Գրիգորյան	Գործառնական տնօրեն, Վարչության անդամ
(անուն, ազգանուն)	(պաշտոն)